

**ՅԲԸՄ- ն բացահայտում է տաղանդներ
Երևան
2019 թվականի հոկտեմբերի 17- ից 19-ը**

Մրցույթի կանոնակարգը

Յոդված 1. Կանոնակարգի կարգավորման առարկան

Յայկական Բարեգործական Ընդհանուր Միության (այսուհետ՝ ՅԲԸՄ) Ֆրանսիայի մասնաճյուղը և ՅԲԸՄ Յայաստանը կազմակերպում են «ՅԲԸՄ-ն բացահայտում է տաղանդներ» խորագրով ծրագիրը (այսուհետ՝ «Ծրագիր»):

Սույն ծրագրի նպատակն է աջակցել երիտասարդ հայ երաժիշտներին և խրախուսել նրանց միջազգային կարիերա ստեղծելու հարցում: Ծրագրի շրջանակներում Յայաստան են հրավիրվում անվանի արվեստագետներ՝ բացահայտելու երկիրը և հայ երիտասարդների գեղարվեստական ներուժը:

Որպես այս ծրագրի մաս, նրանք կազմակերպում են մրցույթ (այսուհետ՝ «Մրցույթ»):

Կազմակերպիչներն են.

- ՅԲԸՄ Ֆրանսիան և Կատարողական Արվեստի բաժինը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է հետևյալ հասցեով՝ Ալբոնի հրապարակ 11, Փարիզ 75016

- ՅԲԸՄ Յայաստանը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է հետևյալ հասցեով՝ Մելիք Ադամյան 2/2, Երևան 0010

Մրցույթը սկսվում է 2019 թվականի հոկտեմբերի 17-ին, ժամը 10-ին և ավարտվում է 2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 11:59-ին ներառյալ (այսուհետ՝ «Փակման ամսաթիվ») : Այն տեղի է ունենալու ՅԲԸՄ Յայաստանի դահլիճում (Մելիք Ադամյան փողոց 2/2, Երևան 0010):

Մրցույթը կարգավորող կանոններն ու սկզբունքները նշված են սույն կանոնակարգում և դրա հավելվածում (այսուհետ՝ «Կանոնակարգ» և «Յավելված») :

Յոդված 2. Ընդունում

Մրցույթին մասնակցելուց առաջ թեկնածուն (այսուհետ՝ անհատապես « թեկնածուն » և հավաքականորեն « թեկնածուները ») հաստատում է, որ կարդացել է այս կանոնակարգը: Այսպիսով, մրցույթին մասնակցելը ենթադրում է ներկա կանոնակարգի ամբողջությամբ ընդունում: Ցանկացած թեկնածու, որը հակասում է սույն կանոնակարգի

հողվածներից մեկին կամ մի քանիսին, կզրկվի մրցույթին մասնակցելու հնարավորությունից, նաև այն մրցանակներից, որոնք նա հնարավորություն ուներ շահելու:

Չողված 3. Մասնակցություն

3.1. Մրցույթին դիմելու համար թեկնածուները պետք է մինչև 2019 թվականի հոկտեմբերի 13 -ը, ժամը 23:59-ը (Չայաստանի ժամանակով), լրացնեն դիմում-հայտը (հավելվածում) ` Google Form-ի միջոցով (հղումը հասանելի է ՉԲԸՄ կայքում):

Ցանկացած թերի մուտքագրում կամ կանոնակարգով և հավելվածով սահմանված պայմաններին անհամապատասխանություն, ներառյալ դիմումների ներկայացման վերջնաժամկետը, չի կարող ընդունվել:

3.2. Մասնակցությունը մրցույթին անվճար է և թույլատրելի Չայաստանում բնակվող բոլոր երիտասարդ երաժիշտների համար: Դիմորդը պետք է գրանցված լինի ՉՉ որո՞ւ ուսումնական հաստատությունում, ինչը կհիմնավորվի կրթական հաստատության վկայականի միջոցով:

2018 թվականի «ՉԲԸՄ- ն բացահայտում է տաղանդներ»-ի մասնակիցները նույնպես կարող են դիմել ծրագրին, եթե չեն շահել գլխավոր մրցանակը:

3.3. Մրցույթն ուղղված է լարային գործիքներ նվագող երիտասարդներին` հետևյալ գործիքների համար

- Ջութակ
- Ալտո
- Թավջութակ
- Կոնտրաբաս

3.4. Մրցույթը կկայանա չորս տարիքային խմբերում.

- խումբ I ` մինչև 10 տարեկան ներառյալ
- խումբ II ` 11-ից 15 տարեկան ներառյալ
- խումբ III ` 16-ից 20 տարեկան ներառյալ
- խումբ IV ` 21-ից 25տարեկան ներառյալ

3.5. ՉԲԸՄ-ն կարող է չեղյալ հայտարարել մրցույթի ցանկացած դիմում, եթե պարզվի, որ տեղի են ունեցել խարդախության կամ իրականությունը թաքցնելու փորձեր (ի թիվս այլ բաների ` ինքնության, տարիքի, բնակության և դիմորդներին առընչվող ցանկացած նույնականացման տարրերի): ՉԲԸՄ-ն իրավունք է վերապահում, այս դեպքում, մրցանակներ չտրամադրել կեղծարարներին, նրանց մշտապես բացառել ՉԲԸՄ-ի կողմից

կազմակերպված որևէ մրցույթից կամ ծրագրից և / կամ այդ խարդախությունների մեղավորներին բերել Հայաստանի իրավական դաշտ:

3.6. Մրցույթին մասնակցելով, դիմորդները ՀԲԸՄ-ին թույլ են տալիս մեջբերել, վերջինիս ցանկության դեպքում, «Գովազդային տեղեկատվություն», մասնավորապես՝

- Դիմորդի ազգանունը, անունը, տարիքը և գտնվելու վայրը:
- Անհրաժեշտության դեպքում, մրցույթին իրենց մասնակցության լուսանկարներն ու տեսանյութերը, առանց որևէ սահմանափակման կամ վերապահման, և առանց դրա դիմաց դիմողներին և /կամ նրանց ներկայացուցիչներին և /կամ նրանց աշխատողներին վարձատրության իրավունք կամ որևէ առավելություն տալու:

Այսպիսով, ՀԲԸՄ-ն ցանկացած միջոցով կարող է հրապարակել և ազատորեն տարածել (կայքեր, սոցիալական ցանցեր, տպագիր մամուլ և այլն) գովազդային տեղեկատվությունն ամբողջ աշխարհում, մրցույթի ողջ ընթացքում և դրանից հետո:

Սույն կանոնակարգով յուրաքանչյուր դիմորդ երաշխավորում է ՀԲԸՄ-ին և ազատում վերջինիս իր դեմ ուղղված ցանկացած հայցադիմումից, բողոքից՝ միտված դիմորդների անձնական տվյալները, մասնավորապես՝ անուն-ազգանունները օգտագործելուն և/կամ ցանկացած լուսանկար և տեսագրություն օգտագործելու համար:

3.7. Մրցույթի մասնակցության հետ կապված բոլոր հնարավոր ծախսերը՝ ճանապարհածախս, կեցության և սննդի ծախս, և այլն, կվճարվեն թեկնածու(ների)ի կողմից:

Հոդված 4. Թեկնածուների ընտրությունը

Թեկնածուներն ընտրվելու են ՀԲԸՄ-ի կողմից՝ հիմնվելով հետևյալ պահանջների վրա.

- Ամբողջական դիմում
- Երաշխավորագիր (ըստ ցանկության)

Ցանկացած անձ, ով չի բավարարում այս պայմանները, կամ ով հրաժարվում է դրանք կատարելուց, հեռացվում է մրցույթից և հաղթելու դեպքում չի կարող օգտվել մրցանակից:

Հոդված 5. Ժյուրիի լսումները

5.1. Ընտրված թեկնածուներին կուղարկվի Էլ-նամակ մրցույթի հրավերով: Ներկայացման հերթականությունը, լսումների օրն ու ժամը հասանելի կլինի ՀԲԸՄ կայքում 2019 թվականի հոկտեմբերի 14-ից:

5.2. Թեկնածուն պետք է ներկա լինի ՀԲԸՄ Հայաստանի գրասենյակում իր լսման օրը, նախապես նշված ժամին՝ իր հրավերով, իր գործիքով և նույնականացման փաստաթղթով:

Ցանկացած թեկնածու, ով չի ունենա վերը նշվածները, դուրս կմնա մրցույթից:

5.3. Անչափահաս դիմորդներին պետք է ուղեկցի ընտանիքի անդամ կամ իրավաբանական ներկայացուցիչ, ով կարող է ապացուցել նրա ինքնությունը:

5.4. Թեկնածուն պետք է նախապես պատրաստած լինի երկու տարբեր երաժշտական ոճերի նյութեր:

Համարների տևողությունը կախված է դիմորդի տարիքային խմբից (այսուհետ՝ «Կատեգորիա»).

- Կատեգորիա 1. Առավելագույնը 5 րոպե
- Կատեգորիա 2. Առավելագույնը 7 րոպե
- Կատեգորիա 3. Առավելագույնը 10 րոպե
- Կատեգորիա 4. Առավելագույնը 15 րոպե

Բոլոր գործիքները կարող են ներկայացված լինել յուրաքանչյուր կատեգորիայում: Ժյուրին կընտրի թեկնածուի կատարած նյութը լսման օրը:

5.5. Թեկնածուն կարող է նվագել հաշվով կամ առանց հաշվի:

Դահլիճում կլինի դաշնամուր: Այն թեկնածուները, ովքեր ցանկանում են ունենալ դաշնակահարի նվագակցություն, պետք է գտնեն դաշնակահար, ապահովեն նրա ներկայությունը լսումների ժամանակ և հոգան նրա ծախսերը:

5.6. Ժյուրին իրավունք է վերապահում ընդհատել լսումները ցանկացած պատճառով:

5.7. Լսումների ավարտին բոլոր թեկնածուները կիրավիրվեն մրցանակաբաշխության երեկոյին, որը տեղի կունենա շաբաթ օրը՝ հոկտեմբերի 19-ին, ժամը 20:00-ին:

Հոդված 7. Մրցանակներ

7.1. Ֆինանսական մրցանակի տեսքով «Գրան պրի» կտրվի ըստ կարգի՝

- Կատեգորիա 1: 75 ԱՄՆ դոլար
- Կատեգորիա 2: 100 ԱՄՆ դոլար
- Կատեգորիա 3: 175 ԱՄՆ դոլար
- Կատեգորիա 4: 250 ԱՄՆ դոլար

Յուրաքանչյուր կատեգորիայի համար կշնորհվի միայն մեկ «Գրան պրի»:

Անչափահաս երեխայի դեպքում մրցանակը կտրվի ծնողին կամ օրինական ներկայացուցչին՝ երեխայի շահից ելնելով:

7.2. Մրցույթի շրջանակներում կարող է շնորհվել «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի մրցանակ» (այսուհետ՝ «ՀԱՖՆ մրցանակ»), որը հնարավորություն կտա մեկ կամ մի քանի մասնակիցների՝ որպես մենակատար, հանդես գալ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ 2019 թվականի նոյեմբերի 22-ին կայանալիք համերգի ընթացքում: ՀԱՖՆ- ն իրավունք է վերապահում սահմանել կատարման ժամանակը և տեսակը՝ համաձայն թեկնածուի երգացանկի :

Հաղթողը (ներ) ը պարտավորվում է(են).

- նվագել անվճար,
- հասանելի լինել ՀԱՖՆ - ի կողմից պահանջվող բոլոր փորձերին:

7.4. Մրցանակակիրներին շնորհված մրցանակները անձնական են և անփոխանցելի, դրանք չեն կարող փոխանակվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ ինչ-ինչ պատճառներով երրորդ կողմին՝ հաղթողի (երի) խնդրանքով: Մրցանակները փոխանակելի չեն մեկ այլ մրցանակի հետ և չեն կարող մասամբ կամ ամբողջությամբ վերադարձվել, այդ թվում՝ կորստի կամ գողության դեպքում:

7.5. ՀԲԸՄ-ն իրավունք է վերապահում բոլոր մրցանակները կամ դրանց մի մասը փոխարինել նույն տեսակի և առնվազն համարժեք այլ մրցանակներով, մասնավորապես նախապես ծրագրված մրցանակների անհասանելիության դեպքում:

Հոդված 8. Հաղթողների ընտրությունը

8.1. Ժյուրիի կազմում կլինեն երաժշտության և կատարողական արվեստի մասնագետներ, երաժիշտներ և գործընկեր կառույցների ներկայացուցիչներ:

Ժյուրիի կազմ.

- ✓ Էդուարդ Թոփչյան, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար
- ✓ Նադիա Գործունյան, ՀԲԸՄ Ֆրանսիայի նախագահ
- ✓ Սևակ Ավանեսյան, Երաժիշտների ասոցիացիայի հիմնադիր
- ✓ Կարմեն Թոսունյան, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր կոնցերտմաստեր
- ✓ Հրաչյա Ավանեսյան, ջութակահար
- ✓ Քրիստիան Էրբսլահ-Փափագյան, ՀԲԸՄ Ֆրանսիայի Կատարողական արվեստի բաժնի տնօրեն
- ✓ Անդրեյ Գրիգչուկ, Բեռլինի օպերայի գլխավոր ալտահար
- ✓ Արամ Թալալյան, թավջութակահար և դիրիժոր
- ✓ Ուրսուլա Ֆոն Լերբեր, դաշնակահար, Սիբեիլուսի ակադեմիա, Փարիզի կոնսերվատորիա, Բլումինգթոնի ակադեմիա
- ✓ Լիլիթ Քուրդյան, Ջուլիարդ երաժշտական ակադեմիա

Ժյուրիի նախագահն է ՋԲԸՄ Ֆրանսիայի Կատարողական արվեստի բաժնի տնօրենը, իսկ պատվո նախագահն է Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը:

8.2. Բոլոր թեկնածուներին ունկնդրելուց հետո ժյուրին կորոշի հաղթող (ներ)ին: Մրցանակները շնորհվելու են ժյուրիի որոշմամբ՝ գնահատման համակարգի միջոցով:

8.3. Մրցանակների հանձնումը հաղթողներին կկատարվի Ծրագրի Մրցանակաբաշխության Երեկոյին, որը տեղի կունենա շաբաթ օրը՝ հոկտեմբերի 19-ին, երեկոյան 20-ին:

Բոլոր թեկնածուները կիրավիրվեն այս մրցանակաբաշխությանը իրենց լսումների ավարտին: Անհասանելիության դեպքում, թեկնածուին պետք է ներկայացնի նրա կողմից վստահված անձ, թեկնածուի և իր անձը հաստատող փաստաթղթերի պատճեններով:

8.4. Բոլոր մասնակիցները կստանան մասնակցության վկայական:

8.5. Ժյուրիի որոշումները վերջնական են, անքննելի և համատեղ ստորագրված գեկույցում: Դրանք չեն կարող լինել որևէ բողոքարկման առարկա:

8.6. Ժյուրին իրավունք է վերապահում չներկայացնել վերոհիշյալ մրցանակները, եթե կարծում է, որ ընտրված թեկնածուների կողմից ներկայացված մակարդակը բավարար չէ:

Հոդված 9. Պատասխանատվությունը

ՋԲԸՄ-ն որևէ պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք թեկնածուների իրերը/նյութերը փոխադրման կամ ներկայացման ընթացքում կարող են կրել: Թեկնածուները հրավիրվում են իրենց նյութը պատշաճ կերպով ներկայացնելու համար:

Հոդված 10. Անձնական տվյալների պաշտպանությունը

Թեկնածուն և նրա օրինական ներկայացուցիչները տեղեկացվում են, որ ՋԲԸՄ-ի կողմից մրցույթի թեկնածուի մասին հավաքված անձնական տվյալներն օգտագործվում են հետևյալ նպատակներով՝

- Մրցույթի մուտքագործման կառավարում,
- թեկնածուների կամ հաղթողների վերահսկում,
- Հաղթողների մասին տեղեկատվություն,
- Վիճակագրություն,
- Մրցանակի շնորհում:

ՀԲԸՄ-ի կողմից հավաքագրված տվյալների ցանկը մանրամասն նկարագրված է հավելվածում ներկայացված հայտի ֆայլում:

Թեկնածուն և նրա օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն ուղղել և ջնջել նրանց վերաբերող տվյալները: Թեկնածուն և նրա օրինական ներկայացուցիչները իրավունք ունեն նաև, օրինական պատճառաբանությամբ, առարկելու իրենց վերաբերող տվյալների օգտագործմանը: Նրանք կարող են օգտվել նշված իրավունքներից գրավոր խնդրանքի տեսքով՝ նշելով դրա նպատակը և ուղարկելով հետևյալ հասցեին.

ՀԲԸՄ Հայաստան
Մելիք Ադամյան 2/2 փողոց
Երևան 0010

Հոդված 11. Փոփոխությունը

ՀԲԸՄ-ն իր հայեցողությամբ իրավունք է վերապահում ցանկացած պահի փոփոխել, երկարացնել, կրճատել այս կանոնադրությունը կամ չեղյալ համարել մրցույթը: ՀԲԸՄ-ն պատասխանատվություն չի կրում այս փաստի համար:

ՀԲԸՄ-ն կարող է մասնավորապես, ցանկացած եղանակով, ներկայացնել այդ փոփոխությունները թեկնածուներին:

Հոդված 12. Վիճարկումներ

Մրցույթին վերաբերող ցանկացած վիճարկում պետք է գրանցված լինի նամակի տեսքով՝ հասցեագրված ՀԲԸՄ-ին (նշված 1-ին հոդվածում), և այն պետք է կազմվի հաղթողների ինքնությունը պարզելուց հետո 1 ամսվա ընթացքում, այդ ժամանակահատվածից այն կողմ, վիճարկումը չի դիտարկվի:

Հոդված 13. Մրցույթի կանոնադրությունը

Մրցույթի կանոնադրությունը հասանելի է ՀԲԸՄ կայքում և կարող է անվճար ուղարկվել ցանկացած անձի, ով հայցում է այն: Այս հայցը պետք է ուղղվի ՀԲԸՄ Հայաստանին:

Ջավելված

Գրանցման հղում

<https://bit.ly/2ocianQ>